



Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն
հասարակական կազմակերպության Շիրակի մասնաճյուղ

ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
2023, Օգոստոս

Շիրակի մարզպետի աշխատակազմ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ

31.08.2023

334 մլն 810 հազար դրամ գումարից ՀՀ կառավարությունը 125 մլն 713 հազարը նախատեսել է Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցման /2 փուլով/ սուբվենցիոն ծրագրի 80 տոկոս համաֆինանսավորման նպատակին: Առաջին փուլի արժեքը 157 մլն 141 հազար դրամ է: Այժմ ընթանում են երկրորդ փուլի շինարարական աշխատանքները: Մանկապարտեզը նախատեսված է 50 երեխայի համար:

Ախուրյան համայնքի Վահրամաբերդ բնակավայրի մանկապարտեզի կառուցման սուբվենցիոն ծրագրի 60 տոկոս համաֆինանսավորման համար էլ կառավարության այսօրվա որոշմամբ նախատեսվել է 58 մլն 222 հազար դրամ: Ծրագրի ընդհանուր գումարը 97 մլն 38 հազար է: Մանկապարտեզը նախատեսված է 50 երեխայի համար, շինության մակերեսը՝ 490քմ:

«Գյումրի համայնքի Ս.Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքի տանիքի վերանորոգման» ենթածրագրի ընդհանուր գումարը կազմում է 7 մլն 407 հազար դրամ, որից կառավարության մասնաբաժինը՝ 3 մլն 333 դրամ՝ 45 տոկոս: Տանիքի մակերեսը 480 քառակուսի մետր է:

ՀՀ կառավարությունը 94 մլն 17 հազար դրամ գումար էլ հատկացրել է «Գյումրի համայնքի երկրորդային 17 փողոցների հիմնանորոգում» սուբվենցիոն ծրագրի «Գյումրի քաղաքի Կոմիտաս փողոցի հիմնանորոգում (Ս.Թեհլերյան փողոցից մինչև բնակավայրերի վերջ)» ենթածրագրի համաֆինանսավորման համար, ենթածրագրի ընդհանուր գումարը 170 մլն 940 հազար դրամ է: Փողոցի երկարությունը 1270 մ է:

Կառավարությունը 53 մլն 524 հազար դրամ է հատկացրել «Գյումրի քաղաքի երկրորդային 8 փողոցների և 1 հրապարակի հիմնանորոգում» սուբվենցիոն ծրագրի «Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակի հիմնանորոգում» ենթածրագրի համաֆինանսավորման համար, ծրագրի ընդհանուր գումարը 133 մլն 810 հազար դրամ է:

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ

29.08.2023

Շիրակի մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հայտնվելու ռիսկի գոտում գտնվող երեխաների բացահայտման աշխատանքների ակտիվացման և ըստ անհրաժեշտության երեխաների իրավունքների պաշտպանության համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով՝ Շիրակի մարզպետի տեղակալ Աննա Մարտիկյանի գլխավորությամբ այսօր անցկացվել է աշխատանքային քննարկում:

Աննա Մարտիկյանը ներկայացրել է մարզում տիրող իրավիճակը, անդրադարձել թվային տվյալներին՝ կարևորելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու ռիսկի գոտում գտնվող երեխաների բացահայտման ուղղված աշխատանքների ակտիվացումը: Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լեյլի Ասլանյանն ու կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանը ներկայացրել են տեղեկատվություն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների հետ կատարված աշխատանքների մասին:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության տարածքային բաժինների պետերը, Շիրակի մարզի Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների տնօրենները, մարզի համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների նեկայացուցիչները:

Խորհրդակցության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև միայնակ մնացած, առողջական խնդիրներ ունեցող տարեցների հաստատություններ տեղավորման խնդիրներին, քննարկվել են նաև առանձին դեպքեր:

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ

15.08.2023

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրելու, ինչպես նաև կանանց նորաստեղծ գումարտակում զինվորական ծառայության անցնելու վերաբերյալ բացատրական և քարոզչական աշխատանքներ իրականացնելու, զինծառայողներին տրվող սոցիալական երաշխիքները, արտոնությունները և ծառայությանն առնչվող բոլոր մանրամասները ներկայացնելու նպատակով Գյումրի և Արթիկ համայնքներում անցկացվել են հանդիպումներ համայնքների բնակիչների և համայնքապետարանների պատասխանատուների հետ:

ՀՀ ՊՆ կադրերի ապահովման, ինչպես նաև զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության սպաների կողմից ներկայացվել են պայմանագրային զինվորական ծառայությանն առնչվող մի շարք հարցեր, այդ թվում վերջին շրջանում սոցիալական երաշխիքների ուղղությամբ կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնք ուղղված են պայմանագրային զինվորական ծառայությունը առավել զրավիչ դարձնելուն: Հանդիպումների մասնակիցների կողմից հնչել են նաև մի շարք հարցեր, որոնց վերաբերյալ տրվել են պարզաբանումներ:

Առաջիկայում քննարկումներ կկայանան նաև մարզի մյուս համայնքներում:

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ

11.08.2023

Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնում այսօր տեղի է ունեցել «Դը Գուրուս» ընկերության մասնաճյուղի բացման արարողությունը:

Բացման արարողությանը ներկա են գտնվել ԱՄՆ փոխդեսպան Չիփի Լեյթինենը, ԱԺ պատգամավոր Կարեն Սարուխանյանը, Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Վահագն Մկրտչյանը:

«Դը Գուրուս»-ը բիոտեխնոլոգիական ընկերություն է, որի շուրջ համախմբվում են ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետները: Ընկերությունը համագործակցում է միջազգային խոշոր դեղագործական ընկերությունների հետ՝ մատուցելով վիճակագրական ծրագրավորման, կլինիկական տվյալների մշակման, բիոստատիստիկայի ոլորտի ծառայություններ:

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ

11.08.2023

ՀՀ կառավարության որոշմամբ 2023 թվականին պետական պատվերի շրջանակներում փոփոխվել և ընդլայնվել է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում ստացող շահառուների շրջանակը:

Ծրագրի հասանելիության բարձրացման նպատակով՝ առաջիկայում Գյումրիում կբացվի անպտղության հաղթահարման առաջին փուլը գործարկող կենտրոն:

Այսօրվա որոշմամբ վերարտադրողական առողջության ծրագրի համար կառավարությունը լրացուցիչ 500 միլիոն դրամ է հատկացրել:

Մանրամասների համար

<https://www.e-gov.am/sessions/>

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ

01.08.2023

Շիրակի մարզպետի աշխատակազմ հուլիս ամսին քաղաքացիներից ստացված 173 դիմումներից 112-ը վերաբերվել է դրամական աջակցության տրամադրմանը:

Դիմումներն առնչվել են քաղաքաշինությանը (32), հողաշինությանը (7), կրթությանը, մշակույթին և սպորտին (5), ՏԻՄ (5), սոցիալական (5) բնագավառին, առողջապահությանը (4), ընտանիքի, կանանց երեխաների իրավունքների պաշտպանությանը (2), գյուղատնտեսության (1):

Դիմումներին տրվել են պարզաբանումներ:

Շիրակի մարզպետի 2023 թվականի հուլիս ամսի թիվ 238-Ս, 269-Ս, 276-Ս, 282-Ս, 286-Ս, 291-Ս, 301-Ս որոշումներով 192 քաղաքացի ստացել է դրամական աջակցություն:

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ

01.08.2023

Շիրակի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում հուլիսի 1-ից 31-ը գրանցվել է 223 ծնունդ, նախորդ ամիս մարզում լույս աշխարհ է եկել 120 տղա, 103 աղջիկ: Ծնունդներից երկուսը գույգ է եղել:

Գյումրու քաղաքապետարան

Գյումրու համայնքապետարան

30.08.2023

Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ծրագիր՝ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում

Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մամոնյանը Գյումրու գլխավոր ճարտարապետ Հենրիկ Գասպարյանի, քաղաքաշինության գծով խոհրդական Ալբերտ Մարգարյանի, օգնական Հրաչ Մելքոնյանի հետ այցելել է շինհրապարակներ, հետևել աշխատանքների ընթացքին:

Համայնքի ղեկավարը շինարարների հետ խոսել է մինչ այս իրականացված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքների մասին, հետաքրքրվել առաջիկա անելիքներից, ներկայացրել իր դիտարկումները:

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվում է Պարույր Սևակ 1, Եղիշե Չարենց 7ա, Մուշ 2թաղ. 7/1 հասցեների բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ծրագիր. շենքերի արտաքին պատերի ջերմամեկուսացում, շենքերի տանիքների ջերմամեկուսացում, ընդհանուր տարածքներում նոր էներգաարդյունավետ դռների և պատուհանների տեղադրում, էներգաարդյունավետ լուսավորության համակարգի տեղադրում:

Ծրագրի իրականացման արդյունքում բնակարանների ջեռուցման նպատակով սպառվող էլեկտրաէներգիայի, գազի ծախսերը կկրճատվեն 30-60 %-ով:

Թվով 3 շենքի էներգաարդյունավետություն- մոտ 800 մլն, որից համայնքի ներդրումը 200 մլն, մնացածը ՄԱԿ և բնակիչ, պետությունը 45 %-360 մլն:

Այս ծրագիրն իր յուրահատկությունը ունի նրանով, որ Գյումրիում կիրառում է առաջին անգամ և որ այստեղ համայնքի ներդրումը ընդամենը 25 տոկոս է: Ծրագրում իր մասնակցությունն ունի ՄԱԿ-ը:

Գյումրու համայնքապետարան

29.08.2023

Համայնքապատկան 10 մանկապարտեզում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվում են վերանորոգման աշխատանքներ

Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանն համայնքի ղեկավարի տեղակալ Վահագն Մկրտչյանի, գլխավոր խորհրդական Հայկ Մուլթանյանի, կրթության բաժնի պետ Շողիկ Ալեքսանյանի և ուղորտային պատասխանատուների հետ աշխատանքային շրջայց է կատարել «Արձագանք» և «Լապտերիկ» մանկապարտեզներ, որտեղ իրականացվում են մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Շինարարի և մանկապարտեզների տնօրենների ուղեկցությամբ շրջել են մանկապարտեզներում, հետևել մինչ այս իրականացված աշխատանքների ընթացքին, հետաքրքրվել առաջիկա անելիքների մասին, ներկայացրել իր դիտողություններն ու առաջարկները:

Գյումրու համայնքապետարան

26.08.2023

Գյումրու համայնքապետարան-«ԱՌՔ» բարեգործական հիմնադրամի համագործակցությունը շարունակվում է

Հիմնադրամի միջոցներով այս տարի գնվում է ևս 8 բնակարան

Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Հայկ Մուլթանյանի, «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Հրահատ Ստեփանյանի, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի փոխնախագահ Ռուբինա Քոլմանի և հիմնադրամի ներկայացուցիչ Մարկ Քոլմանի հետ այցելել են ծրագրի այս փուլում շահառու դարձած գյումրեցի երկու ընտանիքների:

Հիմնադրամի ներկայացուցիչները մոտ 3-4 ամիս է ԱՄՆ-ից եկել և տեղում աշխատում են շահառուների հետ, կազմակերպում ու իրականացնում բնակարանների գնման գործընթացը: 8 շահառուներից 6-ի բնակարանների գնման գործընթացն արդեն իսկ ավարտվել է, 2 բնակարանների մասով՝ փաստաթղթային ձևակերպումներն ընթացքի մեջ են:

Մոտ 30 տարի տնակներում բնակված Պողոսյան և Նադոյան ընտանիքները ծրագրի իրականացման արդյունքում ի վերջո հնարավորություն են ստացել տեղափոխվելու և բնակվելու քարաշեն բնակարաններում: Պողոսյանների բնակարանում այս օրերին իրականացվում են վերանորոգման աշխատանքներ:

Վարդգես Սամսոնյանը կարևորել է «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը, խոսել ծրագրի արդյունքների ու շահառուներին տրվող հնարավորությունների մասին, ապա նաև շնորհակալություն հայտնել բոլոր այն բարերներին ու անձանց, որոնց ներդրումների արդյունքում գյումրեցի ընտանիքներին սեփական բնակարան ունենալու հնարավորություն են ընձեռնում:

Հիմնադրամի կողմից ներդրվող գումարի 50 տոկոսը ընտանիքների համար անհատույց նվիրատվություն է, իսկ մյուս 50 տոկոսը ընտանիքները վերադարձնելու են հիմնադրամին՝ անտոկոս փոխառության կարգով, բնակարանամուտից հետո, 10 տարվա ընթացքում, որից հետո բնակարանն արդեն կտրվի որպես սեփականություն:

Բնակարաններն ընտրվում են շահառու ընտանիքների կողմից:

Գյումրու համայնքապետարան

24.08.2023

Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Վահագն Մկրտչյանը և համայնքապետարանի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժ/պ Նազելի Էլբակյանը մասնակցել են Ամերիկյան համալսարանի Բաց

կրթության Գյումրու կենտրոնում կայացած հանդիպում-քննարկմանը, որին ներկա են եղել Շիրակի մարզպետարանի Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Կարեն Բաղիշյանը, կրթության, մշակույթի, զբոսաշրջության ոլորտների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Քննարկվել են հնարավոր համագործակցություններին առնչվող հարցեր, մասնավորապես՝ Շիրակի մարզպետարան-Գյումրու համայնքապետարան-Ամերիկյան համալսարան եռակողմ գործակցության շրջանակում Գյումրիի գրավչության բարձրացմանն ուղղված ոլորտային կրթական ծրագրերի համատեղ իրականացման վերաբերյալ:

Գյումրու համայնքապետարան
23.08.2023

Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մամոնյանը հյուրընկալել է Հայաստանի «Սթրիթ Վորքաութ» մարզական հասարակական կազմակերպության ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ ֆեդերացիայի նախագահ Արթուր Հարությունյանի:

Հյուրերն իրենց հերթին շնորհակալություն են հայտնել ընդունելության համար, ապա ներկայացրել իրենց ծրագիրը, որով նախատեսում են Գյումրիում հիմնել մեծ մարզահրապարակ: Հանդիպման ընթացքում կողմերը խոսել ու քննարկել են տարածքի ընտրության, նախատեսվող աշխատանքների, բակային սպորտի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների, Հայաստանի տարբեր քաղաքներում սպորտային ցուցադրական ելույթներ կազմակերպելու և մի շարք այլ հարցերի մասին: Ֆեդերացիայի անդամներն իրենց խոսքում նշել են, որ նախկինում ևս Գյումրիում մարզադաշտ կառուցելու հաջողված փորձ են ունեցել:

Հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել առաջիկայում կրկին հանդիպելու, քննարկելու առաջիկա անելիքները:

«Սթրիթ Վորքաութ» մարզական հասարակական կազմակերպությունը զբաղվում է բակային պայմաններում իրականացվող ուժային մարզումների և առողջ ապրելակերպի կազմակերպմամբ:

Գյումրու համայնքապետարան
22.08.2023

Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Վահագն Մկրտչյանը Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնում ներկա է գտնվել ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Ֆուկուշիմա Մասանորիի և ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եդիազարյանի կողմից դրամաշնորհի պայմանագրի ստորագրման պաշտոնական արարողությանը:

Ըստ պայմանագրի՝ 66 137 ԱՄՆ դոլար կհատկացվի խնամքի կենտրոնի վերանորոգման և կահավորման համար: Դրամաշնորհի միջոցով կվերանորոգվի 2-րդ հարկի միջանցքը, կկահավորվի 2-րդ մասնաշենքի 10 սենյակ, որոնք կհարմարեցվեն տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Գյումրու համայնքապետարան
21.08.2023

Ավարտվել են «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահի» պատշգամբի վերանորոգման աշխատանքները:

Հիմնանորոգման աշխատանքներն իրականացվել են 2022 թվականի սուրվենցիոն ծրագրի շրջանակներում: Համայնք-կառավարություն (55-45% հարաբերակցությամբ) սուրվենցիոն ծրագրով պատշգամբի վերանորոգման համար հատկացվել է մոտ 12 մլն դրամ:

Գյումրու համայնքապետարան
17.08.2023

Այսօրվանից գործարկվել է Հ.Կիրակոսյան-Վարդանանց հրապարակ խաչմերուկում տեղադրված հետիոտնային լուսացույցը

Պարեկային ծառայության հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ լուսացույցի գործարկման առաջին օրերին տվյալ տարածքում ծառայություն իրականացնելու, հետիոտների շրջանում լուսացույցից օգտվելու մասով բացատրական աշխատանքներ տանելու համար:

2023 թվականի սուրվենցիոն ծրագրով ձեռք են բերվել նոր լուսացույցներ: Դրանց տեղադրման և գործարկման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Կանչի տարբերակով լուսացույցները նախատեսված են հետիոտային անցումների համար:

Գյումրու համայնքապետարան

17.08.2023

«Անի» թաղամասի 3-րդ և 11-րդ փողոցների երթևեկելի մասի ասֆալտապատման աշխատանքների ձգձգման, առկա թերությունների վերացման, անցկացված ջրամատակարարման նոր ցանցի և դրա փորձարկման ու հարակից այլ հարցեր տեղում ուսումնասիրելու և քննարկելու նպատակով այսօր՝ օգոստոսի 17-ին, Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանը եղել է շինհրապարակում:

Ոլորտային պատասխանատուների՝ համայնքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Սուրեն Ջանոյանի, շինարարի և «Դորոժնիկ» ընկերության ներկայացուցչի հետ շրջայց են կատարել «Անի» թաղամասի 3-րդ փողոցում, տեղում քննարկել այս պահին փողոցում առկա իրավիճակն ու առաջիկա անելիքները:

Դեռևս անավարտ մնացած աշխատանքների մասով համայնքի ղեկավարը տվել է համապատասխան հանձնարարականներ ու պահանջել դրանք իրականացնել հնարավորինս սեղմ ժամկետներում:
«Այսպես էլ հնարավոր չէ, արդեն 3-րդ տարին է չենք կարողանում փողոցների ասֆալտապատումը ավարտին հասցնել: Ի՞նչ աշխատանք է մնացել, արագ արեք վերջացրեք, որ կարողանանք ասֆալտապատումը սկսել, քանի եղանակները թույլ են տալիս: «Դորոժնիկ» այստեղ է, շինարարն այստեղ է, կիսատ մնացած ի՞նչ գործ կա՝ դիտահորեր, հարթեցումներ ավարտեք, խճապատեք, փողոցները պատրաստեք ասֆալտապատման: Հստակ ժամկետ նշեք, մենք էլ, բնակիչն էլ հոգնել, զգվել ենք այս ամենից», - գայրացած ավելացրել է Վ.Սամսոնյանը:

«Դորոժնիկ» ընկերության պատասխանատուն ընդգծել է, որ 3-րդ և 11-րդ փողոցների մասով իրենք գրեթե ավարտել են աշխատանքներն ու փորձարկումները, իսկ շինարարը խոստացել է փողոցներում առկա հիմնային որոշակի աշխատանքները կատարել հնարավորինս սեղմ ժամկետներում, փողոցները նախապատրաստել ասֆալտապատման և մինչև սեպտեմբերի 10-15-ը ավարտել նշված երկու փողոցների երթևեկելի մասի ասֆալտապատումը:

Գյումրու համայնքապետարան

15.08.2023

Այսօր՝ օգոստոսի 15-ին, համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի է ունեցել հանդիպում-քննարկում՝ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների հետ: Հանդիպումը վարել է համայնքի ղեկավարի տեղակալ Վահագն Մկրտչյանը:

Հանդիպմանը ներկա են եղել նաև Շիրակի մարզպետարանի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Արամ Անտոնյանը, ՀՀ Պաշտպանության նախարարության կադրերի գլխավոր վարչության սպաների համալրման բաժնի պետի տեղակալ փոխգնդապետ Արմեն Դոլունցը, զինված ուժերի ներկայացուցիչներ, համայնքապետարանի մի խումբ աշխատակիցներ, ուսանողներ և այլք:

Հանդիպմանը մանրամասն ներկայացվել է կանանց նորաստեղծ գումարտակի, պայմանագրային զինվորական ծառայության անցնելու, կին զինծառայողների ինտեգրման աշխատանքներին առնչվող հարցեր, որին հաջորդել են հանդիպման մասնակիցների հարցերը, ապա նաև պատասխանները՝ ՊՆ ներկայացուցիչների կողմից:

11 նոր սոցիալական բնակարաններ՝ Գյումրիում

Օգոստոս 30, 2023

Գյումրիում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում վերանորոգվել են 11 բնակարաններ, որոնք ծառայելու են որպես սոցիալական բնակարաններ: Ինչպես տեղեկանում ենք Գյումրու քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջից, ծրագրի շրջանակներում կոսմետիկ վերանորոգում է իրականացվել, որի վրա ծախսվել է մոտ 13.5 մլն դրամ: Գյումրու քաղաքապետարանի միջոցներով՝ 5 մլն դրամի շրջանակներում ևս երկու համայնքապատկան բնակարան են վերանորոգվել: Տվյալ բնակարանները ևս ծառայելու են որպես սոցիալական բնակարաններ և տրամադրվելու են անօթևան ընտանիքների: Aravot.am-ը Գյումրու գլխավոր ճարտարապետ Հենրիկ Գասպարյանից հետաքրքրվեց, թե քաղաքի ո՞ր մասում են այդ բնակարանները:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2023/08/30/1364907/>

Մոր կողմից անչափահաս դստերը բռնության ենթարկելու նողկալի դեպքի հետքերով. փոխնախարարի հանձնարարականը՝ շիրակցի տնօրեններին

Օգոստոս 21, 2023 1

Այսօր Գյումրու Օյունջյանի անվան թիվ 21 դպրոցում 2023-2024 ուստարվա մեկնարկին ընդառաջ տեղի ունեցավ տնօրենների օգոստոսյան հերթական խորհրդակցությունը: Այն տևեց բավական երկար. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը տնօրեններին մանրամասն ներկայացրեց սպասվող փոփոխությունները, խոսեց հանրակրթական նոր չափորոշի ներդրման, նոր դասագրքերի ստեղծման, ուսումնական նյութերի կիրառման, հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի փոփոխության, դպրոցների ֆինանսավորման և կառավարման նոր մոդելի, պարտադիր և կամավոր ատեստավորման արդյունքների, դպրոցներում հոգեբանի հաստիք ներդնելու մասին: Մոր կողմից երեխային ֆիզիկական ու սեռական բռնության ենթարկելու նողկալի դեպքը ևս դարձավ քննարկման թեմա: Փոխնախարարը թեև հայտարարեց, որ չի ուզում առանձին անդրադարձ կատարել այդ դեպքին, բայց նայնպես տնօրեններին նախազգուշացրեց. «Կան ընտանիքներ, որտեղ բռնություններ կան: Ցավոք սրտի, նման ընտանիքներ կան, բացառված է, որ դպրոցն այդ մասին չիմանա, որովհետև այս կամ այն ճանապարհով դպրոցին հասնում է այդ տեղեկատվությունը:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2023/08/21/1362838/>

Միջադեպ Գյումրու սրճարաններից մեկում՝ ռուս զինծառայողների մասնակցությամբ. կան 3 ձերբակալվածներ

Օգոստոս 21, 2023

Aravot.am-ի տեղեկություններով, երեկ միջադեպ է տեղի ունեցել Գյումրու 102-րդ ռազմաբազայի տարածքից ոչ հեռու գտնվող «Ռոսիա» կոչվող սրճարանում: Ռազմաբազայի մի քանի աշխատակիցներ սրճարանում կերել-խմել են, հարբել են: Սպասարկման օբյեկտի տերերը, տեսնելով, որ նրանք իրենց լավ չեն պահում, քաղաքակիրթ ձևով՝ թների տակ ընկնելով՝ սրճարանից դուրս են հրավիրել: Որոշ ժամանակ անց այդ նույն զինվորականները նորից հայտնվել են՝ այս անգամ մի քանի հոգու հավաքելով ու կոփվ բերելով:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2023/08/21/1362873/>

Որտե՞ղ է Արփենիի ջրագծերի գումարը. ուղիղ մեկ տարի պաշտոնավարած գյուղապետի գործը՝ հակակոռուպցիոն կոմիտեում

Օգոստոս 23, 2023

Aravot.am-ի տեղեկություններով՝ Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի գյուղերից մեկի՝ Արփենիի նախկին գյուղապետ Վահագն Առաքելյանը կասկածվում է վստահված գույքը հափշտակելու մեջ: ԱԱԾ-ի օպերատիվ տեղեկությունների հիման վրա հայտնաբերված Քրեական ոստիկանության գլխավոր վարչությունը ստուգողական գործողություններ է կատարել ու փաստական տվյալներ ձեռք բերել առ այն, որ ընդամենը մեկ տարի՝ 2015-2016 թթ.-ին պաշտոնավարած 44-ամյա Վահագն Առաքելյանը թույլ է տվել ֆինանսատնտեսական բնույթի չարաշահումներ: Նա, ըստ ձեռք բերված տվյալների, անգամ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը հաստատող փաստաթուղթ է կեղծել, ինչի հետևանքով համայնքին պատճառվել է էական վնաս: Նրա կողմից կատարված յուրացումներից մեկը, ըստ օպերատիվ տվյալների, վերաբերում է գյուղում ջրագծի ցանցի կառուցմանը, որն այդպես էլ նրա պաշտոնավարման օրոք գյուղացիների համար երազանք մնաց:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2023/08/23/1363329/>

Նոր պատգամավոր՝ Շիրակի մարզից

Օգոստոս 24, 2023

Շիրակի մարզի պատգամավորների թիվն այսօր համալրվել է ևս մեկով. ՀՅԴ Շիրակի մարզային կոմիտեի ներկայացուցիչ Մհեր Մելքոնյանը վերցրել է Ազգային ժողովի պատգամավորի մանդատը՝ միանալով «Հայաստան» խմբակցությանը: Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու նպատակով Անդրանիկ Թևանյանը վայր էր դրել իր մանդատը, իսկ «Հայաստան» դաշինքի նախընտրական ցուցակի հաջորդ համարը ՀՅԴ Շիրակի մարզային կոմիտեի ներկայացուցիչ Մհեր Մելքոնյանն էր:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2023/08/24/1363645/>

Գյումրիում «Հայաքվեին» մասնակցած մի խումբ մանկավարժներ «փոշմանել», ջնջել են իրենց ստորագրությունը և այս ամենը նկարել են տվել

Օգոստոս 03, 2023


Գյումրիում երեկ ավարտվել է «Հայաքվե» օրենսդրական նախաձեռնության ստորագրահավաքի փուլը: Մեկ ամսվա ընթացքում միջադեպեր չեն գրանցվել, սակայն եղել են որոշակի արտառոց պատմություններ: «Ազգային արժեք» ակումբի ղեկավար Վարդան Սրտաշյանը, որը հուշագիր էր ստորագրել «Համախմբում» շարժում նախաձեռնող խմբի հետ՝ ըստ էության, դառնալով «Հայաքվեի» Շիրակի մարզի պատասխանատուն, Aravot.am-ի հետ զրույցում պատմեց, որ դպրոցի մի խումբ մանկավարժներ եկել են Գյումրու քաղաքապետարանի շենք ու միացել նախաձեռնությանը: Հիշեցնենք, որ ըստ նախաձեռնության, քրեական պատիժ է նախատեսվում այն անձանց համար, որոնք Արցախը ՀՀ անունից այլ պետության կազմում կճանաչեն, ինչպես նաև կիրառվեն Հայաստանի Հանրապետության անունից Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումից: Մանկավարժները ինքնակամ, ոգևորված եկել ու միացել են ստորագրահավաքին, սակայն կարճ ժամանակ անց հետ են վերցրել իրենց ստորագրությունները:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2023/08/03/1359442/>

Գյումրի, Արարատ, Հրազդան, Վանաձոր և Ալավերդի քաղաքների մթնոլորտային օդում փոշու պարունակությունը հուլիսի 24-31-ը

Օգոստոս 04,2023

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը տեղեկացնում է. Մթնոլորտային օդում փոշու պարունակությունը Գյումրի, Արարատ, Հրազդան, Վանաձոր և Ալավերդի քաղաքներում հուլիսի 24-31-ը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան. Գյումրում և Արարատում՝ հուլիսի 24-ին և 28-ին, Հրազդանում՝ հուլիսի 24-ին և 26-ին, Վանաձորում՝ հուլիսի 24-ին, 25-ին և 31-ին, Ալավերդիում՝ հուլիսի 27-ին և 31-ին:



Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2023/08/04/1359766/>

Ո՞վ է Գյումրիում Նիկոլ Փաշինյանի տրիբունայի դիմաց «Դավաճան» ցուցապաստառը պարզած անձը

Օգոստոս 06,2023

Երեկ Գյումրիում Համահայկական 8-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողության ժամանակ մի երիտասարդ «Դավաճան» գրությամբ պաստառ է պարզել այն տրիբունայի դիմաց, որտեղ նստած էին Նիկոլ Փաշինյանը, կառավարական մյուս հյուրերը: Պաստառը հայտնվել է սպորտային շքերթի ժամանակ Ստեփանակերտի մարզիկների բեմ բարձրանալու պահին: Ի դեպ, դա սպորտային շքերթի ամենահուզիչ պահն էր, մասնակիցներից շատերի համար անակնկալ էր. հանդիսատեսը բռն ծափահարություններ սկսեց՝ Ստեփանակերտ անունը լսելով: Նման մի ոգևորություն էլ նկատվեց գլխավոր ջախը Արթուր Ալեքսանյանի կողմից վառելու պահին: Իսկ ընդհանուր առմամբ, տիրող մթնոլորտը նկարագրելիս սխալված չենք լինի, եթե ասենք՝ չնայած Կրթություն, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար Կարեն Գիլոյանի՝ անթերի, անզուգական վառելուն, ամեն մի երկիր յուրովի ներկայացնելուն, հանդիսատեսի մոտ չկար նախկին ոգևորությունը՝ խենթորեն մարզիկների երկրպագելը: Հասկանալի է, որ Արցախում սկսված սովը ծանր է նստում մարդկանց ընդհանուր տրամադրության վրա: «Դավաճան» գրությամբ պաստառը պարզած անձն արագ հեռացվել է ոստիկանների կողմից: Երեկ աննախադեպ քանակով ոստիկաններ կային Գյումրի քաղաքում, հատկապես քաղաքային մարզադաշտի մոտակայքում, որտեղ Համահայկական խաղերի բացումն էր:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2023/08/06/1359921/>

«Նիկոլ Փաշինյանը փոքրացնում է իմ հայրենիքը, դրա համար եմ «Դավաճան» ցուցապաստառը պարզել».
Գյումրիում տեղի ունեցած միջադեպի հետքերով

Օգոստոս 06, 2023

Երեկ Գյումրիում Համահայկական 8-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողության ժամանակ Արցախի հերոս 30 -ամյա Գոռ Մուրադյանը «Դավաճան» գրությամբ պաստառ էր պարզել այն տրիբունայի դիմաց, որտեղ նստած էին Նիկոլ Փաշինյանը, կառավարական մյուս հյուրերը: Պաստառը հայտնվել է սպորտային շքերթի ժամանակ Ստեփանակերտի մարզիկների բեմ բարձրանալու պահին: Գոռ Մուրադյանը Aravot.am-ի հետ զրույցում ասաց. «Ես նեղված եմ ստեղծված իրավիճակից. սահման է դրված Հայաստանի ու Արցախի միջև, ու չենք կարող գնալ Արցախ, ոտք դնել իմ հողին: Ես բազում ընկերներ եմ կորցրել, ես կորցրել եմ իմ եղբորը՝ հորեղբորս որդուն՝ տանկիստ Արամայիս Մուրադյանին, հերոսի մահով ընկավ, բոլոր գիտեն: Ինչպե՞ս կարող եմ լավ զգալ այս վիճակից:

Գլուխը՝ 2024 թ. ԱՊՀ սպորտային մայրաքաղաք

Օգոստոս 08, 2023

Հայաստանից՝ Telegram-ում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը ԱՊՀ երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի նիստում ընտրվել է խորհրդի նախագահ: Լիազորությունները ուժի մեջ կմտնեն սեպտեմբերի 1-ից՝ 1 տարի ժամկետով: Խորհրդի որոշմամբ Գլուխը ընտրվել է ԱՊՀ երկրների սպորտային մայրաքաղաք, որտեղ 2024 թվականին կանցկացվի ԱՊՀ երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի մեծ համաժողով: Նշենք, որ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը աշխատանքային այցով գտնվում է Բելառուսի մայրաքաղաք Մինսկում՝ հետևելու այս օրերին անցկացվող ԱՊՀ երկրորդ խաղերին: Մինսկ այցի շրջանակում Կարեն Գիլոյանը հանդիպել է Բելառուսի սպորտի և տուրիզմի նախարար Սերգեյ Կովալչուկին: Ոլորտի պատասխանատուները քննարկել են հետագա մի շարք համագործակցություններին և փորձի փոխանակմանը վերաբերող հարցեր: Կարեն Գիլոյանն այցելել է Մինսկում գտնվող սպորտային գիտահետազոտական, վերականգնողական բժշկական կենտրոն, որը աշխարհում լավագույններից է իր տեխնիկական, գույքային հագեցվածությամբ: Գիլոյանը տեղում ծանոթացել է կենտրոնի աշխատանքներին, տեխնիկական բազային, ինչպես նաև կենտրոնի սպասարկման համակարգին:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2023/08/08/1360321/>

Asparez.am

Հայաստանում նախադպրոցական կրթությունը ծանր հարվածի տակ է

25 August, 2023

Քաղաքացիական հասարակությունը՝ հանուն քաղաքացու արժանապատվության եւ իրավունքի:



Բոլոր երեխաները սահմանադրությամբ հավասար հնարավորություն պիտի ունենան մանկապարտեզ հաճախելու:

Կրթությունը սկսվում է մանկապարտեզից եւ ոչ թե դպրոցից:

Մանկապարտեզների մատչելիության թեմայով հերթական քննարկումն օրեր առաջ անցկացվել է Գավառում, որին մասնակցել են կրթության ոլորտի փորձագետներ Սերոբ Խաչատրյանն ու Ատոմ Մխիթարյանը, ոլորտի այլ ներկայացուցիչներ, Գեղարքունիքի մարզպետարանի և մարզի համայնքապետարանների աշխատակիցներ:

Գեղարքունիքի մարզպետարանի կրթության բաժնի պետ Կարեն Զազյանի հավաստմամբ Գեղարքունիքի մարզում գործում է 52 մանկապարտեզ և 53 նախակրթարան: Մարզի 48 բնակավայրում նախադպրոցական հաստատություններ չկան, թեև դրանցից 21-ում գործում են դպրոցներին կից նախակրթարաններ: Մինչև 2026 թվականը Գեղարքունիքի մարզում կառուցվելու է 42 մանկապարտեզ:

Կրթության փորձագետ Ատոմ Մխիթարյանը ներկայացրել է Հայաստանի նախադպրոցական կրթության համակարգում առկա խնդիրների վերաբերյալ կատարված հետազոտությունների արդյունքները:

Նախադպրոցական հաստատություններում առկա են ֆինանսական խնդիրներ, նյութատեխնիկական բազան հնամաշ է, մեթոդաբանական բազայի պատշաճ մակարդակի ապահովման համար առկա չեն կարողություններ եւ այլն:

Մյուս խումբ խնդիրները, ըստ բանախոսի, կրթական են, մեզ մոտ մասնագիտական չափորոշիչների մասին սահմանումներ կան, բայց դրանց կիրառությունը միշտ խնդիրներ է առաջացնում: Կադրերի պատրաստման համակարգը հաջորդ խնդիրն է. ովքե՞ր են աշխատում նախադպրոցական

հաստատություններում: Դաստիարակները հաճախ համայնքի ղեկավարի բարեկամներն են, մտերիմները: Սա ամենահաճախ բարձրացվող խնդիրներից է:

Հաջորդ խնդիրը գենդերային դերաբաշխումն է. մանկապարտեզների գրեթե բոլոր աշխատակիցները կանայք են. սա, ըստ Ատոմ Մխիթարյանի, ազդում է նաև երեխաների դաստիարակության վրա:

Աշխատավարձերի մասով էլ անհավասարության խնդիրներն ակնհայտ են: Օրինակ, կախված այն հանգամանքից, թե ո՞ր մարզում, կամ ո՞ր համայնքում է գործում մանկապարտեզը, աշխատավարձերը կարող են իրարից էականորեն տարբերվել:

«Եթե մի քիչ կոշտ ասենք, ապա նախադպրոցական կրթությունը մենք շատ ծանր հարվածի տակ ենք դրել և շատ մեծ վնաս ենք տվել այս 30 տարիների ընթացքում, ու շատ-շատ մեծ ռեսուրսներ ու ժամանակ է պահանջվելու այն վերականգնելու համար, որովհետև բոլորս էլ գիտենք, որ բավականին լավ ժառանգություն կար խորհրդային տարիներից եկած, որն, ըստ էության, քանդ ու քարափ արվեց», - հավաստում է փորձագետ Սերոբ Խաչատրյանը և ավելացնում. «Հայաստանի պատմության մեջ ամենաշատ մանկապարտեզներ մենք ունեցել ենք 1992 թվականին, մոտ 1240: 2009 թվականին մանկապարտեզների թիվը հասել է 630-ի կարգի, այսինքն մանկապարտեզների կեսը մենք կորցրել ենք: Այս պահի դրությամբ, վերջին տվյալներով, ունենք 981 մանկապարտեզ: Շատ ավելի ծանր է երեխաների թիվը. մանկապարտեզ հաճախող ամենամեծ թվով երեխաներ մենք ունեցել ենք 1988 թվին՝ մոտ 163.000, որը 2001 թվականին դարձել է 44.000, այսինքն 4 անգամ էլ պակասել է երեխաների թիվը: Իհարկե, օբյեկտիվ պատճառներից մեկը նաև այն է, որ ծնունդների թիվն է նվազել և արտագաղթն է մեծացել: Դա է պատճառը, որ երեխաների թիվը կտրուկ անկում է ունեցել»:

«Հանրապետությունում այս պահին ունենք 6809 մանկավարժ դաստիարակ, որոնցից միայն 36-ն են տղամարդ: Սա ևս լուրջ խնդիր էմ համարում, գուցե էս խնդրին մենք իներցիայով ենք վերաբերվում, որովհետև մանկապարտեզում պիտի կանայք աշխատեն, բայց սա հետո շատ լուրջ հետևանքներ է ունենում: Պարզ է, որ երեխաներին պետք է և՛ տղամարդու, և՛ կնոջ խնամք, էդ բալանսը պետք է պահել, մանավանդ հաշվի առնելով, որ ձեր մարզում արտագնա աշխատանքը շատ մեծ թվերի է հասնում և առանց այն էլ երեխաների հայրն արտագնա աշխատանքում է, իսկ դպրոցում էլ, մանկապարտեզում էլ կանայք են դասավանդում», - շարունակում է Սերոբ Խաչատրյանն ու ավելացնում. «Հստ էության, մեզ մոտ կա էդ կարծրատիպը, որ տղամարդիկ պիտի բիզնեսով ու քաղաքականությամբ զբաղվեն, իսկ նախադպրոցական կրթությունը դա կանանց ոլորտն է: Մենք պիտի ավելի լուրջ բաներով զբաղվենք, աշխարհաքաղաքական հարցեր լուծենք: Բայց էս կարծում եմ, որ մեր ձախողումը հենց էդտեղից էլ սկսվում է, որ մենք երկրի ամենակարևոր ոլորտը էս ձևի արհամարհեցինք և գցեցինք էս օրը»:

Փորձագետ Սերոբ Խաչատրյանը 1997 թվականից կրթության ոլորտում է աշխատում, հիշում է, թե 1996 թվականին ինչպես տեղի ունեցավ վարչատարածքային բաժանումը, ձևավորվեցին մարզպետարանները, այն ժամանակ կար նախարարությունում նախադպրոցական բաժին, որը նախակրթարանները հանձնեց մարզպետարաններին և առանց կարողություններ ձևավորելու, այս համակարգը տրվեց համայնքային կառավարման:

«Տեղերում ոչ մեկը մանկապարտեզից խաբար չէր: Գյուղապետ էր, տեղակալ, քարտուղար, որոնցից ոչ մեկը կրթությունից գլուխ չէր հանում: Ու էս մարդիկ պիտի կառավարեին կրթական համակարգ: Սա շատ կոպիտ սխալ է, լավ ապակենտրոնացրեցիք՝ հասկացանք, աշխարհում ընդունված է դա, որ նախադպրոցական կրթությունը համայնքներն են կառավարում, բայց կարողություն պիտի ստեղծեինք, ո՛չ մասնագետ կար, և սկսվեցին գյուղապետերի քմահաճույքները», - պատմում է փորձագետն ու ավելացնում. «Էս անկումները եղան, որովհետև մի տեղ գյուղապետն ասում էր, չե՛մ ուզում, չե՛մ բացում, մյուսն ասում էր, որ էդ փողով ինքը որոշել է ոչ թե մանկապարտեզ բացել, այլ ջրագիծ անցկացնել: Ու պարզվում էր, որ էդ ջրագիծն էլ ուրիշ բիզնես նպատակով է անցկացվում, ոչ թե համայնքի շահերի համար: Եվ էդպես մենք էս համակարգը ձախողեցինք, նաև վերացան դաստիարակների վերապատրաստումները, հատկապես գյուղական համայնքներում, մանկապարտեզները մեկուսացան, իսկ մենք գիտենք, որ մեկուսացումը կրթության թշնամին է»:

Ըստ Սերոբ Խաչատրյանի, մանկապարտեզը մենք միշտ դիտարկում ենք երեխաների պահպանման վայր, առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան 6-ը պիտի պահեն երեխաներին, որ հետո ծնողները գնան վերցնեն:

Սերոբ Խաչատրյանն ասում է, որ ինքը ամենաբարձր աշխատավարձը կտար մանկապարտեզների դաստիարակներին, և ոչ թե համալսարանների պրոֆեսորներին, որովհետև մանկապարտեզի դաստիարակը երեխային փոխելու ավելի մեծ հնարավորություններ ունի, քան պրոֆեսորը:

«Եթե մանկապարտեզի դաստիարակներն իրենց գործը ձախողեցին, ապա դոմինոյի էֆեկտով մնացած բոլոր ոլորտները, մինչև երկրի առաջին դեմքեր, քանդվում է: Այսինքն, դոմինոյի առաջին քարը մանկապարտեզն է, եթե ինքը ընկավ, բոլորին հետը տանում է: Մենք դա տեսնում ենք, այսինքն երեխան գնում է դպրոց, ոչ մի բան չգիտի, որովհետև մանկապարտեզ չի գնացել, ընտանիքում չեն զբաղվել: Դասվարն էլ չգիտի, ինչ անի, ինքը իր ծրագրով գնում է առաջ, երեխաների մի մասը ընկալում է, մյուսները ետ են մնում ու փոքրուց մենք ունենում ենք բևեռացված հասարակություն», -վստահեցնում է փորձագետն ու շարունակում. «Երևանը մի լրիվ ուրիշ աշխարհ է դարձել, սա և՛ լավ է, և՛ վատ: Երևանում մենք հիմա շատ լուրջ խնդիրներ ունենք, էստեղ շատ թանկարժեք մանկապարտեզներ կան, որտեղ երեխայի տարեկան վարձը բժշկական համալսարանում ու իրաբանության ֆակուլտետում գործող վարձերից էլ թանկ է, ունենք 1 ու կես, 2 մլն դրամ տարեկան վարձով մանկապարտեզներ, էլիտար: Կան դասակարգային բաժանումներ, հարուստները գնում են էլիտար մանկապարտեզներ»:

«Ես վճարովի, մասնավոր կրթությանը էնքան էլ մեծ տեղ չեմ տալիս, որովհետև էն երկրում, որտեղ էդ ուժեղ է, կրթությունը վատ վիճակում է, հասարակությունն էլ հետը: Միացյալ Նահանգները վերցնենք: Շատ հետաքրիիր է, կրթության ոլորտում բոլոր հանճարեղ հետազոտությունները իրենք են անում, բայց երբ որ նայում ես իրենց դպրոցների և մանկապարտեզների վիճակը, ամենավատերն են: Ինչո՞ւ է էդպես, որովհետև փող ունեցողները իրենց երեխաներին տարել են էդ հայտնի դպրոցները, մինչև 60.000, 70.000 դոլար տարեկան վարձ են տալիս դպրոցներին, և նաև սա է պատճառը, որ նույն Ամերիկայում մարդիկ երեխա չեն ունենում, որովհետև հաշվում է, որպեսզի իմ երեխային կրթության տամ, տարեկան 70 հազար մենակ մանկապարտեզի, էդքան էլ դպրոցի վարձն է, ու տեսնում է, որ 18 տարի, դա միլիոնավոր դոլարներ կարող է նստի իր վրա, դրա համար ասում է, պետք չի երեխա, կամ 1-ը», -ասում է Սերոբ Խաչատրյանն ու շարունակում. «Մենք պետք է կարողություններ ձևավորենք: Էսօր նախարարության մակարդակից սկսած, մինչև համայնքներ, չունենք մանկապարտեզների կառավարման ոլորտում լավ մասնագետներ, որովհետև ոչ մի ներդրում չի արվում: Անգամ բաժին չկա նախարարությունում: Տեսե՛ք, ունենք 1000 հաստատություն համարյա, բայց էդ 1000 հաստատությունը կառավարելու համար գոնե մի 3 հոգանոց բաժին պետք չի՞ նախարարությունում: Էդ էլ չկա, հանրակրթության վարչության մեջ մի 2 հոգի զբաղվում են: Համայնքներում մի՞ ափսոսացեք, ձեր կրթության պատասխանատուների վրա ներդրումներ արեք, որ իրենք լավ կառավարեն: Որովհետև, եթե մանկապարտեզները լավ կառավարենք, երկրի կառավարումն էլ կլավանա»:

Փորձագետի խոսքով, Հայաստանում շատ զարգացած է ինտենսիվ ծնողավարությունը: Սա այն է, երբ ծնողն անում է ամեն ինչ, որ իր երեխան գնա ամենալավ մանկապարտեզը, ամենալավ դպրոցը, ունենա ամենալավ համակարգիչը և այլն: Հայաստանում ինչո՞ւ է դա լավ զարգացած, որովհետև, ըստ Սերոբ Խաչատրյանի, ծնողների մի խումբ հասկացել է, որ Հայաստանում լավ ապրում է մարդկանց 20 տոկոսը: Եվ ամեն ինչ պիտի անել, որ քո երեխային էլ խցկես այդ 20 տոկոսի մեջ, որովհետև, եթե ինքը այդ 20 տոկոսի մեջ չմնաց, ապա Հայաստանում ապրելը շատ դժվար է լինելու:

«Ըստ Լևոն Բարսեղյանի, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համայնքները կապիտալ ներդրումների այնպիսի կարիք ունեն, որոնք իրենց բյուջեի ներդրումային ռեսուրսները գերազանցում են 10-200 անգամ, այսինքն, համայնքի իրական կարիքը, 100-ապատիկ, 150-ապատիկ մեծ է ունեցած բյուջեի գումարներից: Կառուցվող մանկապարտեզներն էլ լինելու են ՀՈԱԿ-ներ, որոնք տեղական բյուջեի ծախսն են ավելացնելու, 20-100 մլն, մինչև 120 մլն դրամ տարեկան: Համայնքներն արդեն մտածե՞լ են, թե մանկապարտեզների հետագա պահպանման ծախսերն ինչպես են հոգալու տեղական

բյուջեի միջոցներով: Ասում է, հիմնականից պիտի այդ մասին մտածել, առավել ևս, որ խոսքը Գեղարքունիքի մարզի մասին է, որտեղ 7-8 ամիս ջեռուցում պետք է կազմակերպել:

«Չեմ ուզում քննարկել, թե համայնքների զարգացման հնգամյա ծրագրերը որքանով են իրատեսական կամ լիրիկական, էդ վեճն էլ կա Հայաստանում, որովհետև գրում են բաներ, որոնց իրագործման համար շատ հաճախ ուժերը չի պատում: Հուսանք, որ ամեն ինչ իրատեսական է: 5, 10 տարի առաջ որոշ համայնքապետեր իսկապես խուսափել են մանկապարտեզներին հատկացումներ անել, որովհետև ասել են, որ շատ ծախսատար է, ուժերս չի պատի: Որոշ համայնքներում մանկապարտեզների մատուցումը եղել է խուսափողական, շրջանցիկ մոտեցում», - շարունակում է Լևոն Բարսեղյանը:

«Ունենք շատ հայտնի մի պատմություն, Արևադաշտի մանկապարտեզը, որը կառուցել էր Էդուարդո Էռնեկյանը, որի վրա ավելի քան 1 մլն դոլար էր ծախսել: Որ տեսնեք էդ մանկապարտեզը, երևի Մարիոթ հյուրանոցից ավելի շքեղ պայմաններով, ես բացմանը մասնակցել եմ, շքեղագույն մանկապարտեզ: Մեծ շուքով բացվեց, հետո պարզվեց, էդ գյուղում էր տարիքի 10 երեխա կա, ու հարց առաջացավ, թե էդ 1 մլն-անոց մանկապարտեզը գյուղապետը ինչպե՞ս պիտի պահի: Ի վերջո, որոշվեց մանկապարտեզը հանձնել Հայ առաքելական եկեղեցուն, որ կարողանա պահպանել», - հիշում է Մերոբ Խաչատրյանը:

«Մենք անընդհատ խոսում ենք պետական կրթության մասին, բայց Հայաստանում շատ հզոր մասնավոր ինդուստրիա է ձևավորված կրթության ոլորտում, էդ կրկնուսույցները, դասապատրաստողները, զարգացման կենտրոնները, չեք պատկերացնի ինչ ծավալի գումարներ են: Էդ ինտենսիվ ծնողավարությունից որ խոսում էի, էդ ծնողներն են դա զարգացնում: Հայաստանում ասենք, երբեք չի վերանա կրկնուսույցի ինստիտուտը: Եթե որևէ նախարար կասի, որ ես վերացնելու եմ, չհավատաք, որովհետև էդ ինստիտուտը զարգացնում են ծնողները: Որովհետև, եթե նույնիսկ 100 տոկոս բռնի դպրոցական քննությունը և ծրագիրը, էլի միշտ լինելու են ծնողներ, որ ասելու են, փողը տամ, իմ երեխան անվճար ընդունվի, բարձր միավորներով ընդունվի, այսինքն իրենք միշտ զարգացնելու են էդ մասնավոր սեկտորը», - հավաստում է Մերոբ Խաչատրյանը:

Փորձագետ Ատոմ Մխիթարյանն էլ նշում է, որ ակնածանքը ուսուցչի հանդեպ դեռևս կա և դա ավելի ուժեղ է մարզերում, քան խոշոր քաղաքներում և հատկապես մայրաքաղաքում, ինչը շատ լավ է, հիմա, պետք է ամեն ինչ անել, որ դա հանկարծ հետ չզարգանա:

«Մեր ազգի համար ամենակարևոր հաստատությունն է մանկապարտեզը: Մենք պիտի վստահենք մեր կրթությանը, մեր մանկապարտեզներին, մեր տնօրեններին և, ինչու չէ, նաև վերահսկենք», - եզրափակում է Ս. Խաչատրյանը:

Կարինե Կազարովա

Հեռավար աշխատանքի կազմակերպումը շուտով կկարգավորվի օրենքով

29 August, 2023

Մոտ մեկ ամիս առաջ ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի շրջանակում սահմանվում են հեռավար եղանակով աշխատանքի կազմակերպման ընթացակարգերը: Նախագծի կիրառման արդյունքում գործադիրն ակնկալում է բարձր որակավորում ունեցող աշխատուժի թվի մեծացում, բիզնեսի եկամուտների աճ, նաև տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում:



Իսկ իրականում ի՞նչ ակնկալել այս փոփոխություններից, ոչքանո՞վ են դրանք հոգուտ աշխատողների, և արդյո՞ք հնարավոր է վերահսկողություն սահմանել հեռավար աշխատանքի նկատմամբ: Այս հարցերի շուրջ քննարկում է անցկացվել Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում:

Օրենսդրական փոփոխությունների ներդրումից հետո Հայաստանում հեռավար աշխատանքը կկարգավորվի օրենքով:

Գործող կարգավորումների համաձայն՝ հեռավար եղանակով աշխատանքը Հայաստանում սահմանված է միայն տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհի և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածների համար:

Այս տարի Շիրակի մարզի 1172 դիմորդից բուհ է ընդունվել 912-ը
22 August, 2023



Շիրակի դիմորդները ցածր միավորներ ստացել են Հայոց լեզու եւ Մաթեմատիկա առարկաներից

Այսօր Շիրակի մարզում օգոստոսյան խորհրդակցության ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը ներկայացրեց այս տարի Շիրակի մարզից ընդունելության քննություններին մասնակցած դիմորդների ստացած միջին միավորները՝ ըստ առարկաների:

Նախարարի տեղակալն ընդգծեց, որ միջին միավորների առումով մարզերի միջեւ առանձնակի տարբերություններ չկան:

2023 թվականին Շիրակի մարզից Գնահատման եւ թեստավորման կենտրոնի dimord.am կայքում դիմում հայտ է լրացրել 1192 դիմորդ, բուհերի ընդունելության հիմնական փուլի միասնական եւ ներբուհական քննություններին մասնակցության հայտ է ներկայացրել նրանից 1172-ը, մրցույթի հիմնական փուլի արդյունքներով ընդունվել է 881-ը, իսկ լրացուցիչ փուլով՝ 31-ը: Ընդհանուր առմամբ, Շիրակի մարզից ընդունվել է 912 դիմորդ, նրանցից անվճար տեղերը համալրել է 238 ուսանող:

Շիրակի մարզից 19 դիմորդ ընդունվել է բուհ տարկետման իրավունքով Բնագիտական մասնագիտություններ ուսուցանելու նպատակով:

«Սա բավականին լավ ցուցանիշ է», - Շիրակի մարզի տվյալներն այսպես է գնահատում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը:

Շիրակի մարզի դիմորդների համար ամենանախընտրելի բարձրագույն ուսումնական հաստատությունը եղել է ՇՊՀ-ը, որտեղ ընդունվել է 202 դիմորդ, 2-րդ տեղում ԵՊՀ-ն է, այստեղ Շիրակի մարզից ընդունվել է

170-ը, 3-րդ տեղում՝ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը՝ ընդունվել է 120-ը, 4-րդ տեղում՝ ՀԱՊՀ-ի Գումրու մասնաճյուղը, ընդունվել է 68-ը եւ այլն:

Մասնագիտությունների ընտրության առումով դիմորդների համար առաջնային են եղել՝ ԵՊԲՀ-ի Բուժական գործ, որտեղ ընդունվել է 45 ուսանող եւ ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղի Ֆինանսներ եւ Կառավարում բաժինները:

Ընդունելության երկու փուլերի քննությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ Շիրակի մարզում ամենաբարձր միավորը դիմորդները ստացել են Անգլերեն եւ Հայոց պատմություն առարկաներից, քննությունների երկու փուլերը ներառյալ, միջին միավորը գրանցվել է՝ համապատասխանաբար 13 եւ 13 միավոր:

Ա.Սվաջյանն ասում է, որ մտահոգիչ են Հայոց լեզու եւ գրականություն, Մաթեմատիկա (8-11 միավորի միջակայքում են), Բնագիտական առարկաների քննություններից ստացված դիմորդների միավորները, հատկապես Քիմիա, Աշխարհագրություն, իսկ Ֆիզիկա առարկայից դիմորդները, համեմատաբար, ավելի բարձր միավորներ են ստացել, քան բնագիտական մյուս առարկաներից:

«Մտահոգիչ տվյալներ ունենք նաեւ Ռուսերենի մասով, առաջին փուլում գրանցվել է միջինը 9,7 միավոր, իսկ 2-րդ փուլում՝ 10,5», - ասում է ԿԳՄՍ նախարարի տեղակալն ու ընդգծում՝ դիմելով դպրոցների տնօրեններին. պետք է հասկանալ, թե ինչպես կարելի է իրավիճակը փոխել եւ առաջ շարժվել:

Շիրակի մարզի Աշոցք եւ Ամասիա համայնքների դպրոցների դիմորդները ամենաբարձր միավորները ստացել են Անգլերենի քննությունից, իսկ ամենացածր միավորները՝ Քիմիա եւ Ռուսերեն առարկաների քննություններից՝ միջինը 11 միավոր:

Արթիկ համայնքի դիմորդներն ամենաբարձր միավորները ստացել են Անգլերեն եւ Հայոց պատմություն առարկայի քննություններից, իսկ ամենացածրը՝ Քիմիայից եւ Ռուսերենից:

Գյուղական դպրոցների դիմորդներն ամենաբարձր միավորը ստացել են Հայոց լեզու եւ գրականություն առարկայից՝ միջինը 12,8 միավոր, ամենացածր միավորն այս դպրոցների դիմորդները գրանցել են Կենսաբանություն առարկայից՝ միջինը 10,6 միավոր, որը մի փոքր ավելի է, քան քաղաքային դպրոցների դիմորդներն են ստացել:

«Այն իրավիճակը, որն ունենք Հայոց լեզու եւ Մաթեմատիկա առարկաներից, ոչ այնքան հուսադրող պատկեր է: Շատ լավ է, որ օտար լեզուները լավ են սովորում, բայց մյուս կողմից էլ սա նշանակում է, որ դպրոցում անելիքները շատ են: Ակնհայտ է, որ Անգլերենի քննության շատ բարձր միավորները դպրոցի արդյունքները չեն, այլ՝ լրացուցիչ պարապմունքների», - ասում է Ա.Սվաջյանը:

Բուհ ընդունվելու համար դիմորդների գերակշիռ մասը ստիպված ընդգրկվում է լրացուցիչ, վճարովի պարապմունքներում եւ քննություններին բարձր միավորներ ստանում կրկնուսույցների օգնությամբ: ՀՀ-ում դեռեւս չկա հետազոտություն, թե դիմորդների քանի տոկոսն է կարողանում դպրոցական գիտելիքներով ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն:

Անի Մկրտչյան

Կամավոր ատեստավորման արդյունքները վճռորոշ են լինելու 2 խմբի ուսուցիչների համար

22 August, 2023

Նախակրթարաններում աշխատելու իրավունք ունեն նաեւ միջին մասնագիտական կրթությամբ անձինք

Մեկ ամսից մեկնարկելու է ուսուցիչների կամավոր ատեստավորման



հերթական գործընթացը: Հայտագրման գործընթացն արդեն ավարտվել է: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի խոսքով, հայտագրվել է մոտ 6000 ուսուցիչ:

Հայտագրված ուսուցիչների թվում են նաև նախորդ տարում կամավոր ատեստավորման անցողիկ շեմը (60 միավորից ցածր) չհաղթահարած, նաև միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչները: Այս երկու խմբի ուսուցիչների դպրոցում հետագա աշխատանքը շարունակելու համար վճռորոշ են լինելու այս տարվա ատեստավորման արդյունքները: Եթե նրանք այս անգամ չհաղթահարեն ատեստավորման նվազագույն շեմը, գործատուները ծանուցումից հետո լուծելու են վերջիններիս հետ կնքած աշխատանքային պայմանագրերը:

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, 2023 թվականի օգոստոսի 20-ից պետական հանրակրթական դպրոցներում չի թուլատրվելու միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների աշխատանքը: Սակայն եթե միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչն այս տարում մասնակցի կամավոր ատեստավորման գործընթացին եւ հաղթահարի նվազագույն շեմը, ապա շարունակելու է իր աշխատանքը դպրոցում:

Բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչն իր՝ կամավոր ատեստավորմանը մասնակցելու մասին տեղեկանք էր տրամադրելու դպրոցին, դպրոցի տնօրենը երկարաձգելու էր պայմանագրի ժամկետը եւ սպասելու էր ուսուցչի կամավոր ատեստավորման գնահատականին՝ մինչև հոկտեմբեր ամիսը, երբ ԿԳՄՍ նախարարությունը կհրապարակի ատեստավորման արդյունքները: Ուսուցչի չհաղթահարելու դեպքում դպրոցը հայտարարելու է թափուր տեղի մրցույթ եւ լուծելու է միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցչի հետ աշխատանքային պայմանագիրը:

Կրթության պետական տեսչությունը Շիրակի 9 դպրոցում հայտնաբերել է մոտ 177 խախտում

21 August, 2023

Այսօր օգոստոսյան խորհրդակցության ժամանակ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը Շիրակի մարզի պետական հանրակրթական դպրոցների տնօրեններին ներկայացրեց, թե Կրթության պետական տեսչությունը 2022-2023 թվականներին ինչպիսի խախտումներ է արձանագրել Շիրակի մարզի դպրոցներում եւ արդյունքում ինչպիսի հետեւություններ են կատարել:



«Դուրս բերված ընդհանրական խնդիրները միշտ մեր ուշադրության կենտրոնում են, որպեսզի դրանք վերլուծենք եւ հատկապես ընդհանրական խնդիրների մասով հասկանալ, որ այդտեղ մենք գուցե միջամտելու եւ ինչ-որ գործընթացներ փոփոխելու կարիք ունենք, որպեսզի դրանք այլևս չառաջանան», - նշեց Թ.Սարգսյանը:

Շիրակի մարզի 14 դպրոցներում Կրթության պետական տեսչությունը կատարել է ուսումնասիրություն, որի արդյունքում, ինչպես ասաց հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը, մոտ 177 խախտում է բացահայտվել դպրոցներից 9-ում, տրվել են հանձնարակականներ հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ:

Հայտնաբերված խախտումներն առավելապես վերաբերել են հետեւյալ հարցերին. մանկավարժական աշխատողների նշանակում, կանոնադրական պահանջների հետ կապված խախտումներ, ուսուցչի թափուր տեղի մրցույթի ընթացակարգի պահանջների խախտումներ, սովորողների համակարգի ձեւավորման հետ կապված խնդիրներ եւ այլն:

Կատարողականների վերաբերյալ ժամկետը դեռևս չի լրացել երկու դպրոցում: Ըստ ներկայացված արդյունքների 32 հանձնարարականից 21-ը կատարվել է ամբողջությամբ, իսկ տասը կատարվել է մասնակի, միայն մեկ հանձնարարական չի կատարվել:

Դպրոցների տնօրենների համար անակնկալ է ԿԳՄՍ նախարարության զարգացման ծրագրերի ստուգման նոր մեխանիզմի ներդրումը: Զարգացման ծրագրի բովանդակության նվազագույնը 70 տոկոսը լինելու է թեկնածուի հեղինակային խոսքն ու վերլուծությունը, հակառակ դեպքում այն չի դիտարկվի մրցութային հանձնաժողովի կողմից:

Դպրոցներում, այսպիսով, դժվարացել է տնօրենների թափուր տեղերի համալրման ընթացակարգը: Զարգացման ծրագրերի բովանդակության իսկությունն ու հեղինակային իրավունքն այսուհետ ստուգվելու է ԿԳՄՍ նախարարության կողմից, որից հետո այն ստուգելու եւ գնահատելու է մասնագիտական հանձնաժողովը: Նախկինում զարգացման ծրագրերի գերակշիռ մասը տնօրենների թեկնածուներն արտագրել են միմյանից, իսկ բովանդակությունն աչքի տակով անցկացրել են ոչ մասնագետները. նրանք եղել են կառավարման խորհրդի անդամները:

Այս նոր բարեփոխումը տնօրենների համար տեղի անակնկալ է համարվում:

Անի Մկրտչյան

ԿԳՄՍ նախարարի տեղակալը դպրոցներին հորդորում է պաշտպանել երեխաների իրավունքները եւ անձնական տվյալներ չհրապարակել

22 August, 2023



Եթե դպրոցը բռնություն է նկատում, չպիտի աչքերը փակի. ներդրվում է հոգեբանի հաստիք

Այս ուսումնական տարվանից պետական հանրակրթական բոլոր դպրոցները կունենան հոգեբանի հաստիք:

Հոգեբանների՝ դպրոցներում աշխատելու անհրաժեշտության մասին մի շարք հասարակական կազմակերպություններ բարձրաձայնում են 10 տարուց

ավելի:

Դպրոցներում հոգեբանների հիմնական աշխատանքն ուղղված է լինելու բուլինգի՝ հալածանքի դեպքերի կանխարգելմանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կարծում է, որ հոգեբանի հաստիքի ներդրման աշխատանքը դժվար է ընթանալու: «Վստահ չեմ, որ հենց սկզբում կարողանալու եք գտնել հոգեբաններ, ենթադրում եմ, որ հիմնականում գյուղական դպրոցներում կարող է լինեն հոգեբանների պակաս», - ասում է նա:

Ըստ նախարարի տեղակալի՝ հոգեբանական տեսանկյունից դպրոցը լինելու է անվտանգ միջավայր:

«Ցանկացած երեխա, որն ունի հոգեբանական դժվարություններ, որոնք անդրադառնում են ուսումնառության վրա, անպայման պիտի ստանա հոգեբանական աջակցություն: Հոգեբանը, ընդհանուր առմամբ, պետք է աջակցի դպրոցին, որպեսզի դպրոցում կանխարգելվեն բռնության կամ բուլինգի երեւոյթները եւ օգնի դասղեկներին, ուսուցիչներին, որպեսզի գործողություններ ձեռնարկվեն նման երեւոյթների բացառման, կամ առնվազն նվազեցման ուղղությամբ», - ասում է նա:

Նախարարի տեղակալն այսօր Շիրակում օգոստոսյան խորհրդակցության ընթացքում անդրադարձավ բռնությունների կանխարգելման գործողություններում դպրոցների դերին եւ ուսուցիչների՝ աշակերտների անձնական տվյալները գաղտնի պահելու անհրաժեշտության հարցին:

«Բոլոր այն երեխաները, որոնք ապրում են այնպիսի ընտանիքներում, որտեղ բռնություն կա, իսկ, ցավոք սրտի, այդպիսի ընտանիքներ կան, դրա մասին բացառված է, որ դպրոցը չիմանա, որովհետեւ այս կամ այն ճանապարհով դպրոցին հասնում է այդ տեղեկատվությունը. երեխան գալիս է կապտուկներով, տրամադրության ֆոնն է վատ լինում, համայնքը փոքր է լինում, այսպես թե այնպես, այդ ինֆորմացիան հասնում է: Երեխան դպրոց չի գալիս միայն սովորելու համար, երեխան գալիս է՝ որպես անձ ձեւավորվելու համար եւ դպրոցը երեխայի պաշտպանության օղակն է: Եւ եթե դպրոցը որեւէ բան նկատում է, չպիտի աչքերը փակի, մտածի, որ դա իրեն չի առնչվում, չի վերաբերում, դպրոցը առնվազն պիտի դրա մասին իրազեկի խնամալսկության, հոգաբարձության մարմիններին, որոնք երեխաների պաշտպանության համայնքային մարմիններ են: Դրանից հետո արդեն մեր դաշտում չէ, թե ինչ աշխատանքներ կիրականացվեն համապատասխան կառույցների կողմից: Եթե ունենք կասկած, մտավախություն, ռիսկ եք տեսնում, սրա մասին պիտի բարձրաձայնեք, որպեսզի նմանատիպ դեպքեր չունենանք», - նշեց Ա.Սվաջյանը եւ ներկաներին խնդրանքով դիմեց.

«Խնդրում եմ փոխանցել նույն հորդորը ձեր ուսուցիչներին. ցանկացած երեխայի մասին տեղեկատվությունն անձնական տեղեկատվություն է եւ որեւիցե մեկը իրավունք չունի որեւէ երեխայի վերաբերյալ տեղեկություն տարածել յուրայինների շրջանում, էլ չեմ ասում լրագրողներին տալ հարցազրույցներ: Ցավոք, նման իրավիճակներում այս հարցը շատ սուր տեսնում ենք, երբ ուսուցիչները սկսում են երեխաների անձնական կյանքից տարբեր տեսակի բաներ պատմել: Սա երեխայի իրավունքի ոտնահարում է եւ դպրոցի կողմից նմանատիպ երեւույթը բացառվում է»:

Անի Մկրտչյան

Այլ աղբյուրներ

Գյումրի-Լանջիկ ավտոճանապարհին ավտովթարի մասնակից «ԶԻԼ»-ի վարորդը կալանավորվել է

25 August, 2023

Գյումրի-Լանջիկ ավտոճանապարհին ավտովթարի մասնակից «ԶԻԼ»-ի վարորդն այս գիշեր կալանավորվել է: Այս մասին [NEWS.am](https://www.news.am)-ին հայտնել են ՀՀ դատախազությունից:

Օգոստոսի 14-ի գիշերը Երեւան-Գյումրի ավտոճանապարհին՝ Լանջիկ գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ողբերգական ավտովթար: Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 90-րդ կմ-ին բախվել են «Volkswagen» մակնիշի ուղեւորափոխադրող միկրոավտոբուսը եւ «ZIL» մակնիշի բեռնատարը: Զոհվել է 12 քաղաքացի, այդ թվում՝ միկրոավտոբուսի վարորդը եւ «Համշեն տուրի» զբոսավարը, ծանր վիրավորել՝ 6-ը:

Ըստ Քննչական կոմիտեի՝ վթարը տեղի է ունեցել Երեւան քաղաքի ուղղության երթուղիների ուղեմասում, առաջամասերով միմյանց են բախվել հիշյալ տրանսպորտային միջոցները, որոնցից «Վոլկսվագեն» մակնիշի տրանսպորտային միջոցը գտնվել է իր երթուղիների ուղեմասում՝ դեպի Երեւան քաղաքի ուղղությամբ, իսկ «Զիլ» մակնիշի տրանսպորտային միջոցը՝ հանդիպակաց երթուղիների ուղեմասում՝ դեպի Գյումրի քաղաքի ուղղությամբ:

Նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով (ճանապարհային երթուղեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթուղեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը):



**Գյումրիում սպանվել է 36-ամյա տղամարդ. առերևույթ հանցագործություն կատարած անձը ձերբակալվել է. ՔԿ
07 August, 2023**

2023 թվականի օգոստոսի 6-ին՝ գիշերը, ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն է ստացվել հաղորդում այն մասին, որ նույն օրը աջ դաստակի շրջանում վնասվածքով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ բուժօգնության է դիմել Գյումրի քաղաքի՝ 1983թ. ծնված բնակիչ, ով հայտնել է, որ վնասվածքն ստացել է ընկերոջը դանակահարելու ընթացքում միջամտելու ժամանակ:

Նույն օրը նշված բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվել, որ բժշկական կենտրոնի բակում հայտնաբերվել է կողերի շրջանում կտրած-ծակած վնասվածքներով մոտ 36 տարեկան տղամարդու դի: Պարզվել է, որ վերջինս հանդիսանում է 36-ամյա Ա. Սարդարյանը:

2023թ. օգոստոսի 6-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով և 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2023թ. օգոստոսի 5-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Գյումրիում գործող ռեստորաններից մեկում բարբառի հետ կապված լեզվակոթիվ է տեղի ունեցել նշված ռեստորանի երկու աշխատակիցների միջև, որը, արդեն երկու կողմից այլ անձանց ներգրավմամբ, շարունակվել է աշխատանքային ավարտից հետո, այլ վայրում՝ «Ձկն ձոր» տանող ճանապարհին: Նրանց միջև խոսակցությունը կրկին վերաճել է վիճաբանության, որի ընթացքում մասնակիցներից մեկը սուր կտրող ծակող գործիքով հարվածել և վնասվածքներ է հասցրել իր հետ վիճաբանողներից 30-ամյա տղամարդու աջ ձեռքին, Ա.Սարդարյանի որովայնի հատվածին և դիմել փախուստի: Ստացած վնասվածքներից Ա.Սարդարյանը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

Վնասվածք ստացած անձը, ինչպես նաև մահացած Ա.Սարդարյանը ճանաչվել են տուժող: Նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի գնություն, որի ընթացքում վերցվել են արնանման նյութի հետքից նմուշներ, վիճաբանության հետ հնարավոր առնչություն ունեցող հարմարեցված առարկա՝ մահակ, և այլ իրեր: Նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ: Ռեստորանից առգրավվել են դեպքի վերաբերյալ հետաքրքրություն ներկայացնող տեսագրությունները:

Դեպքի որոշ էական հանգամանքներ պարզելու և առերևույթ հանցանք կատարած անձին հայտնաբերելու վերաբերյալ հետաքննության մարմնին տրվել է օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն:

Իրականացված անհետաձգելի գործողությունների արդյունքում նշված անձը՝ Մասիս խոշորացված համայնքի բնակիչ 36-ամյա տղամարդը, հայտնաբերվել է ՀՀ Գեղարքունիքի մարզում և ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին: Վերջինս ձերբակալվել է:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ քննչական կոմիտե